ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Անահիտ Մխիթարեան

Հայաստանեաց Եկեղեցին ընդունում է եօթ խորհուրդ՝ Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Օծում, Ձեռնադրութիւն եւ Պսակ:

Մկրտութիւնը քրիստոնէական կարեւոր խորհուրդներից մէկն է եւ առաջինը. «Առաջին խորհուրդն է մկրտութիւնն, որ է նոր մտելոցն յեկեղեցի: Երկրորդն՝ դրոշմն. որ է պատերազմողացն ընդդէմ թշնամոյն սատանայի: ...զի մկրտութիւնն է խորհուրդ հաւատոյ. ուստի յայտ է, զի նախ՝ հաւատամք եւ ապա՝ մկրտիմք: ...Մկրտութիւնն է ընդդէմ սկզբնական մեղացն»[1]:

Ըստ քրիստոնէական աշխարհընկալման՝ Մկրտութիւնը մարդկութեան նախնական՝ ադամական մեղքից մաքրուելու (հմմտ. Գործք. Բ. 38, ԻԲ. 16, Կող. Բ. 12-14) եւ հոգեւոր վերածնունդի խորհուրդն է, այսինքն՝ Մկրտութեամբ մարդը հոգեւոր ծնունդ է առնում, դառնում նոր մարդ՝ ծնուելով մկրտութեան աւազանից, որն ընկալւում է որպէս եկեղեցու արգանդ.[2]. «Ի Քեզ անկայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ, դու ես Աստուած իմ: ...Որպէս ծննդեամբ ի խաւարէ արգանդի ի լոյս կենցաղոյս գամք, այսպէս մկրտութեամբն՝ ի խաւարէ անգիտութեան՝ ի լոյս գիտութեան գամք»[3]:

Կրօնական նշանակութեամբ «մկրտել» նշանակում է «խորասուզել, ընկղմել, մխրճել»[4] կամ ջրով լուանալ ու մաքրել, քանի որ ջուրը, իբրեւ մաքրութեան խորհրդանիշ, հնուց ի վեր եղել է կրօնական արարողութիւնների բաղկացուցիչ մաս. ««Մխումն ի ջուր, լուացումն ջրով: Երբեմն որպէս արտաքին լուացումն ըստ խտրանաց հրէից, կամ ջրացանութիւն: ... Սուրբ խորհուրդ քրիստոսական մկրտութեան. որ եւ ասի լուսաւորութիւն, կնիք»[5]:

«Մկրտել» բառը, սակայն, ունի էլ աւելի վաղ հիմքեր. այն առաջացել է «մկրատել, կտրել» անուանումներից[6], որը կարծես (սեմ. krt «կտրել, թլփատել» արմատից[7]) նոյնանում է թլփատելու, այսինքն՝ արբունքի նուիրագործման արարողութեան հետ (ինիցիացիա), երբ տարիքային մի խմբից միւսին անցնելիս կատարում էին ծիսական յատուկ արարողութիւններ, որոնք յաճախ ուղեկցւում էին ծանր փորձութիւններով (այդ թւում՝ նաեւ մանկան կամ պատանու ծիսական թլփատումը): Հնում թէ՛ աշխարհիկ կեանքում, թէ՛ կրօնական սովորութիւններում մարմ-

---

1 **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք հարցմանց*, Երուսաղէմ, 1993, էջ 587:

2 Համաձայն քրիստոնէական մեկնաբանութեան՝ Քրիստոսն ընկալւում է որպէս փեսայ, եկեղեցին՝ հարս, մկրտութեան աւազանը՝ արգանդ, որից ծնւում է նոր մարդ: Տե՛ս **Բաղդասարեան Է.**, *Յովհաննէս Երզնկացին և նրա խրատական արձակը*, Եր., 1977, էջ 149: **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր*, Երուսաղէմ, 1998, էջ 308:

3 **Բաղդասարեան Է.**, *Յովհաննէս Երզնկացին*, էջ 149:

4 **Աճառեան Հր.**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Գ, Եր., 1977, էջ 331:

5 *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հտ. Բ, Վենետիկ, 1836, էջ 285:

6 «Մկրտել. գրի և հնչի Մընկրտել, բայց գտանի գրեալ և Մկրընտել» (տե՛ս նոյն տեղում):

7 **Աճառեան Հր.**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Գ, Եր., 1977, էջ 331:

նի մի մասի ծայրատելը եւ կամաւոր կերպով այն աստուածներին ու սրբերին նուիրաբերելն ընդունուած կարգ է եղել: Բացի այդ, նուիրագործման հնագոյն արարողութեան ժամանակ մկրտուել են նաեւ արեան մէջ, յետագայում դրա արձագանքները տեսնում ենք քրիստոնէութեան մէջ այլ մեկնաբանմամբ, այսինքն՝ նահատակուել յանուն Քրիստոսի՝ չուրանալով քրիստոնէական հաւատը: Եւ այդ նահատակութիւնը համահաւասար էր արեան մկրտութեան. «...Մկրտութիւն արեամբ՝ որպէս վկայիցն. որք արեամբն իւրեանց մկրտեցան եւ սրբեցան ի մեղաց. եւ եղեն չարչարակիցք Քրիստոսի»[8]:

Իսկ թէ ինչ կապ կար կնունքի ու թլփատման միջեւ, Գրիգոր Տաթեւացին հետեւեալ կերպ է մեկնել. «Եթէ Քրիստոս թլփատութեամբն զհին օրէնս կատարեաց, իսկ մեզ նոր օրէնս եդ զմկրտութիւնն՝ ասելով. մկրտեցարո՛ք յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: ...Որպէս մկրտութիւն սրբէ սկզբնական մեղքն, նոյնպէս եւ թլփատութիւնն: Ասեմք նախ՝ թէ թլփատութիւնն ի հին օրէնս էր ընդդէմ սկզբնական մեղաց, որպէս օրինակն եւ նմանութիւն: Իսկ մկրտութիւն ի նորս է ընդդէմ սկզբնական մեղաց, որպէս իր եւ ճշմարտութիւն: ...մկրտութեամբն արու եւ էգն սրբին, այլ թլփատութեամբն՝ միայն արուն եւ ոչ էգն»[9]:

Մկրտութիւնը կատարւում է երեք ձեւով՝ հեղմամբ, ջրի մէջ ընկղմամբ եւ ջուր ցանելով: Հայոց եկեղեցին Մկրտութիւնը կատարում է հեղմամբ եւ ջրի մէջ ընկղմամբ: Սակայն եղել է նաեւ Մկրտութեան մեկ այլ տարբերակ՝ մկրտուողի երեսին փչելով. «Եւ ապա փչէ երիցս անգամ յերես երեխային, նշանակէ զհերքելն սատանայի որպէս հողմն զփոշի, եւ ասէ. Ե՛լ պիղծ հոգի, ել ի պատկերէս Աստուծոյ եւ տուր պատիւ եւ փառս կենդան(ւ)ոյն Աստուծոյ Հաւր: Եւ ապա յետ այսր առնէ մատամբն խաչ ի ճակատն տղային, եւ ասէ. Ես կնքեմ ի ճակատ քո զնշան սուրբ խաչին տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ կնքէ ի վերա(յ) կրծիցն եւ ասէ. Դնեմ զնշան սուրբ խաչին տեառն մերոյ Յիսուսի ի սիրտս քո...»[10]:

Հայոց մէջ, քրիստոնէական եկեղեցու սովորութեան համաձայն, մկրտուողին երեք անգամ ընկղմում են ջրի մէջ՝ յանուն Սուրբ Երրորդութեան. «երիցս ընկղմումը կը համապատասխանէ Քրիստոսի քաւչական գործին: Ջուրին մէջ մտնելը մահուան նշանակ է. ընկղմումը՝ թաղման, ջուրէն դուրս ելլելը՝ յարութեան: Այսպէս, հին մարդը կը մեռնի, նորը յարութիւն կ'առնէ: Մկրտեալը՝ եկեղեցւոյ փրկուած մարդկութեան մէկ անդամ կ'ըլլայ»[11]:

Ըստ Պօղոս առաքեալի (Հռովմ., Զ. 3-11, Կող., Բ. 12)՝ Քրիստոսի մահը, թաղումը եւ յարութիւնը ոչ միայն պատմական իրողութիւններ են, այլեւ՝ համամարդկային՝ աշխարհի յաւերժական կարգում, քանի որ Մկրտութեամբ մկրտուողը միանում է Քրիստոսին. «մասնակից կ'ըլլայ Անոր կեանքի այս իրողութեանց, կը մեռնի Անոր մահով, կը թաղուի Անոր մահուամբ եւ յարութիւն կ'առնէ Անոր յարու-

8 **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք քարոզութեան, որ կոչի Զմեռան հատոր*, Երուսաղէմ, 1998, էջ 98:

9 **Գրիգոր Տաթեւացի**, *Իսլամը հայ մատենագրութեան մէջ*, ուսումնասիրեց եւ հրատարակեց Բ. եպս. Կիւլեսերեան, Վիեննա, 1930, էջ 169-170:

10 Ձեռ. թիւ 1173, Մաշտոց ԺԳ, Սիս, 1345 թ., թղ. 146աբ (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Գ, *Մաշտոց – Գիրք ձեռնադրութեանց*, յօրինեցին Հ. Բարսեղ Սարգիսեան եւ Հ. Գրիգոր Սարգսեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1966, էջ 166. այսուհետեւ՝ *Վենետիկի ցուցակ, հտ. Գ*): Հաւանաբար Սսոյ Մաշտոցի մէջ ներմուծուած են լատին ծիսարանի որոշ տարրեր (Տե՛ս նաեւ **Գրիգոր Տաթեւացի**, *Զմեռան հատոր*, էջ 60):

11 **Փոլադեան Դ.**, *Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ խորհուրդները*, Պէյրութ, 1957, էջ 11:

թեամբ»[12]: Այսինքն՝ ջրի մէջ մտնելով՝ մեռնում է Քրիստոսի հետ իր մեղքերի համար, ջրի մէջ ընկղմուելով՝ թաղւում է Նրա հետ՝ ապացուցելու, որ իր մահը մեղքի համար իրական է, ինչպէս Քրիստոսինը եղաւ, եւ ելնելով ջրից՝ վերածնւում է՝ նոր կեանք մտնելով:

Մկրտուողը, եթէ չափահաս է, պէտք է ունենայ հաւատ եւ ապաշխարի (մինչ այդ եղած բոլոր մեղքերը ջնջւում են Մկրտութեամբ): Իսկ եթէ մկրտուողը մանկահասակ է, ապա մկրտւում է ծնողի հաւատով, այսինքն՝ երեխայի հոգեւոր դաստիարակութեան ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է նախ՝ ծնողների, ապա՝ կնքահօր եւ յետոյ՝ եկեղեցու վրայ այնքան ժամանակ, մինչեւ որ երեխան դառնայ չափահաս: Ուստի անհրաժեշտ է, որ թէ՛ ծնողները եւ թէ՛ կնքահայրն ունենան մեծ հաւատ եւ միեւնոյն եկեղեցու անդամ լինեն: Կնքահայրը համարւում է մանկան հոգեւոր հայրը[13], նա պէտք է իր սանիկին մեծացնի քրիստոնէական ոգով. «...Որպէս ի մարմնաւոր ծնունդն մանկաբարձն է եւ դայեակն, նոյնպէս ի հոգեւորն կնքահայրն. նախ զի՝ խրատէ եւ կերակրէ զնա բանիւ եւ զգեցուցանէ զնա: ...Եւ թէ մկրտեալն փոքր լիցի եւ թէ մեծ՝ պիտոյ է կնքահայր, զի լեզու եւ միջնորդ է նմա առ քահանայն»[14]:

Մկրտութիւնը սովորաբար կատարւում է եկեղեցու վիմակերտ աւազանում, սակայն, եթէ տուեալ վայրում չկայ եկեղեցի, ապա Մկրտութիւնը կարող է լինել տանը՝ թոնրի վրայ[15] կամ որեւէ կամայական տեղ:

Հայոց Եկեղեցում նորածին երեխաներին մկրտում էին ութ օրականում: Դա կապուած էր Հին Ուխտի աւանդութեան հետ. ինչպէս ընտրեալ հրեաների զաւակներն էին թլփատւում ծննդեան ութերորդ օրը՝ որպէս ուխտի նշան (տե՛ս Ծննդ. ԺԷ. 10-12), այնպէս էլ քրիստոնեաներն էին իրենց «ուխտը» կապել Քրիստոսի ծննդեան ութերորդ օրուայ հետ: Սակայն ութ օրականում մկրտում էին աւելի ուշ շրջանում, իսկ վաղ դարերում մկրտում էին չափահաս տարիքում. «...այդ դարուն (Է. դար) սովորական էր եւ չափահաս մկրտուիլ, ծննդեան հանդէսը մկրտութենէն հեռի եւ առանձին կը կատարուէր: Բայց միջին դարուն, ուր արդէն հաստատուն էր ութօրեայ մուտն յաւազան, ա՛յս առթիւ կը կատարուէր հին հանդէսը»[16]:

Ըստ Մաշտոց ծիսական ժողովածուների[17] Մկրտութեան կարգը սկսւում է խրատով, որտեղ նոյնպէս յիշատակւում է չափահասների մկրտութիւնը, ինչպէս ընդունուած էր. «Եթէ կամիս զչափահաս զոք քրիստոնեայ առնել, պարտ է զայս կարգ կատարել: Նախ չէ պարտ յեկեղեցի թողուլ, այլ երախայ ձեռնադրեսցի յառաջ՝ երիս շաբաթովք կամ աւելի եւս՝ նախ քան զմկրտութիւնն, որով հաւատն եւ զվարդապետութիւն եկեղեցւոյ բաւականասցի ուսանել ի վարդապետէն. զայս ուսուցանելով՝ խրատեսցէ աղօթից ստէպ կալ: Այս կարգաւորութիւն չափահասակացն է[18]: Իսկ

12 Նոյն տեղում, էջ 12:

13 Կնքահայրը չի կարող լինել այլադաւան եկեղեցու կամ այլ կրօնի պատկանող անձ:

14 **Գրիգոր Տաթեւացի**, *Ամառան հատոր*, էջ 145:

15 **Լալայեան Ե.**, *Վարանդա*, – «Ազգագրական հանդէս», Բ. գիրք, Թ., 1897, էջ 148:

16 **Հ. Վարդան Վ. Հացունի**, *Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1912, էջ 400:

17 «Մաշտոց» ծիսական ժողովածոյի մասին տե՛ս **Օրմանեան Մ.**, *Ազգապատում*, հտ. Ա, Էջմիածին, 2001, էջ 312-324, 553, էջ 1184-1186: **Օրմանեան Մ.**, *Միսական բառարան*, Անթիլիաս-Լիբանան, 1979, էջ 154: **Պողարեան Ն.**, *Միսագիտութիւն*, Նիւ Եորք, 1990, էջ 91-120: *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*, Եր., 2002, էջ 685-686 և այլն:

18 Մաշտոցի հնագոյն բնագրերից երևում է, որ մկրտուողները չափահաս են եղել: Տե՛ս նաև **Հ. Սահակ Ճեմճեմեան**, *Մկրտութեան արարողու-*

թէ տղայ մկրտիցի, յորժամ ութօրեայ լինի, առնու քահանայն զերեխայն եւ զկնքահայրն, եւ տանի ի դուռն եկեղեցւոյն»[19]:

Մկրտութեան ժամանակ ծնողները[20] եկեղեցի չէին գնում եւ ներկայ չէին գտնւում արարողութեանը, երեխային եկեղեցի էր տանում տատը կամ դայակը. «մայրն ոչ բերէ զտղայն իւր ի յեկեղեցին, այլ՝ մամն կամ դայեակն»[21]:

Մկրտողը անպայման պէտք է լինի ձեռնադրուած քահանայ. «Պիտոյ է զի լիցի քահանայ մկրտօղն. եւ ոչ աշխարհական ոք, կամ կին՝ ըստ այլոց»[22]: Եկեղեցական որոշ կանոնների համաձայն՝ քահանան քաղցած վիճակում պէտք է կատարէր կնունքը: Արարողութիւնները՝ կնունքը, պսակն ու թաղումը, պէտք է կատարուէին երկիւղածութեամբ՝ հարազատների աղօթքների ներքոյ, առանց զրոյցի ու ծիծաղի[23]:

Մկրտութեան խորհուրդը կրկնել չի կարելի. Հայոց եկեղեցին արգելում է կրկնամկրտութիւնը, քանի որ ինչպէս մարդը ծնւում է մեկ անգամ, այնպէս էլ մեկ անգամ է մկրտւում՝ որպէս հոգեւոր ծնունդ: Մկրտութիւնը կարող է կրկնուել միայն այն ժամանակ, երբ.

ա. այն չի կատարուել յանուն Սուրբ Երրորդութեան, այսինքն՝ ուրիշ հաւատքի որեւէ անդամ ուզում է դառնալ հայ առաքելական եկեղեցու զաւակ.

բ. այն կատարուել է անվաւեր կերպով, այսինքն՝ եթէ երեխան մկրտուել է օծում ու ձեռնադրութիւն չունեցող մեկի կողմից.

գ. մկրտող հոգեւորականը չի կատարել ծիսակարգի կարեւոր որեւէ կէտ:

Իսկ թէ որեւէ մեկը մահանայ առանց մկրտուելու, ապա նրա համար չի կարող կատարուել թաղման կարգ: Սակայն Մաշտոցներից մեկում յիշատակւում է, որ եթէ փոքր երեխան մահանայ առանց մկրտուելու, ապա. «չէ պարտ առանց քահանայի թաղել, այլ տանին յեզեր գերեզմանացն, քահանայն ասէ զԳ փոխ Ամբիծքն ի բուն: Եւ թաղեն՝ խաչակնքելով Գ անգամ: Այդ եւ եւթն չկայ»[24]:

Մաշտոցներում Մկրտութեան արարողութիւնն ընդհանրացած ձեւով ներկայացւում է «Կանոն Մկրտութեան» խորագրով: Սակայն այն հանդիպում է նաեւ այլ անուանումներով՝ «Կանոն լուսաւոր Մկրտութեան», «Կանոն Մկրտութիւն առնելոյ», «Կանոն յորժամ քրիստոնեայ առնեն», «Կանոն կենդանարար եւ սուրբ Մկրտութեան», անգամ՝ «Կանոն երախայութեան» եւ այլն:

Ա. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մինչեւ բուն Մկրտութիւնը կատարւում է ապաշխարութիւն, որի ժամանակ կնքահայրն ու խորհրդակատարմանը ներկայ գտնուողները զղջում են իրենց գործած մեղքերի համար՝ յանուն երեխայի եւ Աստծուց թողութիւն են հայցում:

թիւնը Մաշտոցներու մէջ, – «Բազմավէպ», 1971, թիւ 1-2, էջ 27:

19 Մաշտոց. արարողութիւնք պաշտամանց եկեղեցւոյ Հայաստանեայց՝ ըստ կարգաւորութեան սրբոց հարցն մերոց, բաղդատութեամբ բազմաթիւ եւ հնագիր օրինակաց իբր յիսնից նաեւ հնագոյն երկաթագիր ձեռագրի, Վենետիկ, 1831 (այսուհետեւ՝ *Մաշտոց*, Վենետիկ, 1831), էջ 1:

20 Տե՛ս **Լալայեան Ե.**, *Գանձակի գաւառ*,– «Ազգագրական հանդէս», Զ. գիրք, Թ., 1900, էջ 279:

21 Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարան (այսուհետեւ՝ ՄՄ), ձեռ. 891, Մաշտոց, ԺԷ դ., էջ 19ա:

22 **Գրիգոր Տաթեւացի**, *Ճմեռան հատոր*, էջ 60:

23 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն հայոց*, աշխ.՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Եր., 1961, էջ 304: **Բաղդասարեան Է.**, *Յովհաննէս Երզնկացին*, էջ 177-178:

24 Ձեռ. թիւ 711, Մաշտոց ԺԷ., ԺԴ. կամ ԺԵ. դ., թղ. 68բ (Տե՛ս Վենետիկի ցուցակ, հտ. Գ, էջ 212):

Նախքան Մկրտութիւնը քահանան երեխային տանում է եկեղեցու դռան մօտ. «Եւ ապա յաւուրս մկրտութեան առ դուռն եկեղեց(ւ)ոյն կատարելոց է քահանայն զայս կարգ հանդերձ միաբան ուխտիւն ի վերայ տղայոց եւ չափ(ա)հասակաց»[25]: Հայոց եկեղեցիներում դուռը միշտ նայում է արեւմուտք, իսկ եկեղեցի մտնողի հայեացքն ուղղւում է դէպի արեւելք, այսինքն՝ դէպի Յիսուսը՝ որպէս արեւի ու լոյսի խորհրդանիշ: Եկեղեցում արարողութիւնը սկսւում է «Հայր մերով», որից յետոյ ընթերցւում են սաղմոսներ ու աղօթքներ. «...Զճանապարհս քո, Տէ՛ր, ցո՛յց ինձ, եւ զշաւիղս քո ուսո՛ ինձ: Առաջնորդեա՛ ինձ ի ճշմարտութեան քում եւ ուսո՛յ զիս, զի դու ես Աստուած փրկիչ իմ... Զմեղս մանկութեան իմոյ եւ զանգիտութեան իմոյ մի՛ յիշեր, այլ յիշեա՛ զիս, Տէ՛ր՝ ըստ ողորմութեան քում վասն քաղցրութեան քոյ...»[26]:

Քահանան ոլորում է կարմիր ու սպիտակ թելերից հիւսուած նարօտը[27] ասելով շարականը. «Երրորդութիւն անբաժանելի եւ զօրութիւն երկնային. լոյս ծագեալ յաշխարհ. նմա յանցուք զօրհնութիւնս երգով», որից յետոյ՝ «Պահպանիչը». «Պահպանեա՛ զնարօտս Քրիստոս Աստուած մեր ընդ հաւանեաւ Սուրբ եւ պատուական խաչի քո ի խաղաղութեան»[28]:

Ապա քահանան երեք անգամ աղօթում է. իւրաքանչիւր աղօթք ունի իր նշանակութիւնը, համաձայն որի՝ նախ՝ Աստուած պէտք է ընդունի մկրտուողին, ապա՝ մաքրի ադամական մեղքից ու սրբի աւազանում:

Այնուհետեւ կնքահայրը երեք անգամ ծնկի է գալիս[29], որից յետոյ, երեխային գրկած, շրջւում է դէպի արեւմուտք[30] (այդ ժամանակ կնքահայրը երեխայի հետ պէտք է լինի եկեղեցու ձախակողմեան մասում, իսկ քահանան՝ աջակողմեան), քահանայի հետ միասին երեք անգամ արտասանում է «Հրաժարիմքը», այսինքն՝ սատանայի իշխանութիւնից հրաժարումը. «Հրաժարիմք ի սատանայէ եւ յամենայն խաբէութենէ նորա... եւ յամենայն չար զօրութենէ նորա հրաժարելով հրաժարիմք»[31]:

Ապա կնքահայրը, երեխային գրկած, շրջւում է դէպի արեւելք՝ քահանայի հետ երեք անգամ ասելով «Հաւատամքը»: Մկրտուողը, հրաժարուելով մեղանչական աշխարհից, շրջւում է դէպի հաւատք ու հաւատի դաւանութիւն, այսինքն՝ բացւում են եկեղեցու դռները, եւ մկրտուողը ապաշխարած ու մաքրագործուած մտնում է եկեղեցի՝ համարուելով քրիստոնեայ եկեղեցու անդամ: Բոլորը մտնում են եկեղեցի՝ մօտե-

25 Ինչպէս տեսնում ենք, այստեղ կատարւում է մի կարգ միայն չափահաս տղաների համար, որից յետոյ նոր մկրտում են: Ձեռ. թիւ 457, Մաշտոց Ա., Թ. կամ Ժ. դար, «Կանոն Մկրտութեան [եւ կնունք տալոյ] յորժամ քրիստոնեա(յ) առնեն» (Թղ. 68բ, հմմտ. *Վենետիկի ցուցակ*, հտ. Գ, էջ 19):

26 Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ. Յորում աւանդին ըստ մեծի մասին Կարգ և Կանոնք արարողութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ: Արարեալ ի Նախնեաց և կարգաւորեալ ի մերոց Սրբոց Թարգմանչաց ի շնորհափայլ մեծաց Վարդապետաց, Պոլիս, 1807 (այսուհետեւ՝ *Մաշտոց*, Պոլիս, 1807), էջ 6-7:

27 Նարօտի մասին Գրիգոր Տաթևացին մեկնաբանում է՝ քրիստոնէական ըմբռնումներից ելնելով. «Նարօտին գոյնք որակացն կարմիր և սպիտակ՝ արեանն և ջրոյն ունին զխորհուրդ բղխեալ՝ ի կենարար կողէն Քրիստոսի, որով միացեալ պսակեցաւ եկեղեցի սուրբ» (տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, *Ամառան հատոր*, էջ 203):

28 *Մաշտոց*, Պոլիս, 1807, էջ 7:

29 Եթե մկրտուողը չափահաս է, ապա ինքն է երեք անգամ ծնկի գալիս և ասում. «Ի Քեզ անկայ ես արգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես Աստուած իմ» (Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, *Ամառան հատոր*, էջ 149):

30 Արևմուտքը խորհրդանշում է խաւարը, չարը, որից հրաժարւում է մկրտուողը (կամ նրա փոխարէն՝ կնքահայրը), և շրջւում է դէպի արևելք՝ դէպի Քրիստոսի լոյսը՝ խոստովանելով դաւանանքը:

31 *Մաշտոց*, Պոլիս, 1807, էջ 9:

նալով աւազանին, իսկ քահանան երգում է «Արեգակն արդարութեան» շարականը:

Ըստ Մաշտոց ծիսական ժողովածուների՝ շատ յաճախ կանանց չի թոյլատրուել մօտենալ Մկրտութեան աւազանին. «Եւ բացեալ զդուռն, մտանեն յեկեղեցին, եւ երթան առաջի սրբոյ աւազանին: Եւ կին ի ժամ մկրտութեանն մի՛ կացցէ բնաւ մերձ աւազանին մկրտութեան»[32]: Դա հետեւեալ կերպ է մեկնաբանուել. «Եւ զի որպէս այր մարդ ի մարմնաւոր ծննդեան ժամանակն ոչ մտանէ ի տունն, նոյնպէս եւ ոչ ի հոգեւոր ծնունդն չէ պարտ կին մարդոյ մտանել յեկեղեցին կամ տեսանել զարդանդ աւազանին»[33]:

Բուն մկրտութիւնը սկսւում է աւազանի մօտ: Մկրտող քահանան ջուրը լցնում է աւազանի մէջ խաչաձեւ՝ կարդալով «Զայն Տեառն ի վերայ ջուրց բազմաց» սաղմոսից եւ աստուածաշնչեան ընթերցումներից. «Արդ՝ աղաչեմք զքեզ, Տէ՛ր, առաքեա՛ զհոգիդ քո սուրբ ի ջուրս յայս՝ եւ սրբեա՛ զսա, որպէս սրբեցեր զՅորդանան՝ իջանելով քո ի նմա ամենասուրբդ ի մեղաց յօրինակ այսմ աւազանի մկրտութեան՝ վերստին ծննդեան ամենայն մարդկան: Եւ շնորհեա սմա զջուրս զայս յորում մկրտի սա այժմիկ, լինիլ ի թողութիւն մեղաց...»[34]:

Մկրտող հոգեւորականն աղօթում ու խաչով օրհնում է ջուրը՝ «Օրհնեսցի եւ սրբեսցի ջուրս այս՝ նշանաւ սուրբ խաչիս»՝ Մկրտութեան շարականը երեք անգամ կրկնելով: Յետոյ սուրբ միւռոնից երեք կաթիլ լցնում է աւազանի ջրի մէջ՝ երգելով «Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց» շարականը[35]:

Երեխային մերկացնում են, կնքահայրը գրկում է նրան, իսկ քահանան աղօթում է. «Տէ՛ր, արա՛ զսա արժանի մեծի շնորհաց քոց: Մերկեա՛ ի սմանէ զհնութիւն մեղաց եւ նորոգեա՛ ի կեանս նորս, եւ լցո՛ զօրութեամբ հոգւոյդ սրբոյ ի նորոգութիւն փառաց Քրիստոսի քոյ»[36]:

Աղօթքի միջոցով քահանան փորձում է մկրտուողի մէջից մերկացնելով հեռացնել մեղքերի հնութիւնը (ադամական) եւ նոր կեանքով նորոգել, լցնել Սուրբ Հոգու զօրութեամբ, այսինքն՝ ծիսական գործողութիւնը (մերկացնել երեխային) լրացւում է ծիսական խօսքով (աղօթք) եւ մտքով[37]: Գրիգոր Տաթեւացին մեկնաբանում է. «...Մերկացուցանելն ի զգեստէն՝ զմերկութիւնն Ադամայ ցուցանէ. եւ սա մերկանայ զհին մարդն Ադամ եւ զգենու զնորն Ադամ՝ զՔրիստոս, ըստ այսմ՝ որք ի Քրիստոս մկրտեցայք՝ զՔրիստոս զգեցեալք էք»[38]:

Յետոյ քահանան հարցնում է կնքահօրը. «Երեխայս զի՞նչ խնդրէ»: Կնքահայրը պատասխանում է. «Հաւատ, Յոյս, Սէր

---

32 *Մաշտոց. Արարողութիւնք պաշտամանց եկեղեցւոյ Հայաստանեայց՝ ըստ կարգաւորութեան սրբոց հարցն մերոց՝ բաղդատութեամբ բազում ընտիր օրինակաց*, կազմ. Տէր Մարգար Տէր-Կարապետեան, ի Կալկաթա, 1836, էջ 19 (այսուհետ՝ *Մաշտոց*, Կալկաթա, 1836):

33 **Փոլադեան Դ.**, *Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ խորհուրդները*, էջ 17 (ըստ Երուսաղէմի Ձեռագրատան թիւ 289 Մաշտոց, Կանոն Մկրտութեան, էջ 123):

34 *Մաշտոց*, Պոլիս, 1807, էջ 14:

35 Նոյն տեղում:

36 *Մաշտոց*, Պոլիս, 1807, էջ 15:
«Եւ հրամայե մերկանալ զերախայական զգեստն եւ լինել կազմ ի լուացումն սուրբ: Եւ քահանայն ասե զաղաւթս զայս ի վերա(յ). Որ կոչեցեր զծառայս քո Տէր ի լուսաւորութիւն Մկրտութեան, աղաչեմք զքեզ, Տէր, արա զսա արժանի մեծի շնորհաց, մերկեա ի սմանէ զհնութիւն մեղաց եւ նորոգեա ի կեանս նորս» (Ձեռ. թիւ 457, Մաշտոց Ա., Թ. կամ Ժ. դար, «Կանոն Մկրտութեան [եւ կնունք տալոյ] յորժամ քրիստոնեա(յ) առնեն», Թղ. 73ա. հմմտ. *Վենետիկի ցուցակ*, հտ. Գ, էջ 21):

37 Այստեղ գործում է համապարփակ արխայիկ միտք-խօսք-գործ երրորդութիւնը, որն առկայ է վաղնջական ծէսում: Տե՛ս **Абрамян Л. А.**, *Первобытный праздник и мифология*, Ер., 1983, с. 27:

38 **Գրիգոր Տաթեւացի**, *Ճմեռան հատոր*, էջ 60:

եւ Մկրտութիւն. Մկրտիլ եւ արդարանալ, մաքրիլ ի մեղաց, ազատիլ ի դիւաց, եւ ծառայել Աստուծոյ»: Քահանան նոյն հարցը հնչեցնում է երեք անգամ, եւ երեք անգամ էլ լսւում է կնքահօր նոյն պատասխանը: Յետոյ քահանան ասում է կնքահօրը. «Ըստ քո հաւատի՝ թող լինի քեզ»: Իսկ եթէ երեխան չափահաս է, ապա ինքն է պատասխանում հարցին:

Արարողութեան ժամանակ քահանան երեխային մկրտութեան անուն է տալիս. «Կանոն ուխտեալ տղայի. բերեն երեխայն ի դուռն եկեղեցւոյն՝ եւ խնդրեն անուն ի քահանայէն: Քահանան ասէ զաղօթս զայս ի վերայ տղային, եւ մամն բերէ[39] զտղայն. Տէ՛ր Աստուած մեր, աղաչեմք զքեզ նշանեսցի լոյս երեսաց քոց ի վերայ ծառայիս քո այս անուն եւ նշանեսցի լոյս Միածնի քո ի սիրտս»[40]:

Քահանան, մեկ անգամ ասելով մկրտութեան բանաձեւը, երեք անգամ ընկղմում է աւազանի ջրի մէջ. «(Այս անուն) ծառայս Աստուծոյ եկեալ յերախայութենէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Գնեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունի զօրդեգրութիւն հօրն երկնաւորի. լինիլ ժառանգակից Քրիստոսի, եւ տաճար Հոգւոյն սրբոյ»[41]: Ապա ջրից հանելով՝ երեք ափ ջուր է լցնում երեխայի գլխին:

Մաշտոց ծիսական ժողովածոներից մեկում յիշատակւում է, որ քահանան ձախ ձեռքով բռնում է երեխայի պարանոցը, աջով՝ ոտքերը. «...թէ տղայ է, ձախ ձեռամբն բռնէ զվիզն, եւ աջովն զոտքն, գլուխն յարեւմուտս եւ ոտքն յարեւելս, գլուխն ի բարձր, երեսն ի վեր կոյս, եւ ոտքն ի խոնարհ»[42] եւ մինչեւ ծոծրակը ընկղմում է աւազանի ջրի մէջ երեք անգամ՝ մեկ անգամ ասելով մկրտութեան բանաձեւը:

Եթէ մկրտուողը չափահաս է, ապա պէտք է մերկանայ, մինչեւ ոտքերը հասնող սպիտակ շապիկ հագնի եւ մի մեծ թասի մէջ նստի. այդ դէպքում քահանան երեք անգամ գաւով ջուր է լցնում նրա գլխին՝ ամբողջ մարմինը թրջելով եւ մկրտութեան բանաձեւն ասելով: Ամէն անգամ ասելիս պէտք է մկրտուողը ոտքի կանգնի ու նորից նստի: Իսկ եթէ Մկրտութիւնը հոսող ջրում է կատարւում, ապա մկրտուողն ինքնիրեն երեք անգամ մտնում է ջուրը, եւ քահանան ասում է մկրտութեան բանաձեւը[43]:

Հնում հայոց մէջ ընդունուած էր մկրտուել մերկ. «Մկրտութեան պահուն նախկին քրիստոնէից սովորութիւնն էր մերկ ի մօրէ մտնել աւազանը, այր թէ կին, ըստ վկայութեան Հարց ու քանդակաց: Նոյնպէս ենթադրելու ենք Հայոց մուտքն ալ Եփրատի սրբարար ջրերուն մէջ, ինչպէս յիշեալ հնագոյն Մաշտոցն եւ ուրիշներ եւս կը գրեն «մերկանալ... եւ լինել կազմ ի լուացումն սուրբ, առանց յաւելլու նոր հանդերձի մը զգացումը...»[44]:

---

39 Ձեռագրերից մեկում հանդէս է գալիս մանկաբարձը. «...Բերէ մանկաբարձն զտղայն առ քահանան» (Տե՛ս ՄՄ, ձեռ. 2788, Մայր Մաշտոց, Աղթամար, 1463թ., էջ 72ա):

40 Ձեռ. թիւ 1483, Մաշտոց ՁԳ, Կ. Պոլիս, 1641 թ., թղ. 19ա: Տե՛ս Վենետիկի ցուցակ, հտ. Գ, էջ 471:

41 *Մաշտոց*, Պոլիս, 1807, էջ 15: Մեկ այլ Մաշտոցում երեխային առաջին անգամ ջուրը մտցնելիս ասւում է. «(Այս անուն) ծառայս Աստուծոյ եկեալ յերախայութենէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր», երկրորդ անգամ. «(Այս անուն) ծառայս Աստուծոյ եկեալ յերախայութենէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Որդւոյ» և երրորդանգամ. «(Այս անուն) ծառայս Աստուծոյ եկեալ յերախայութենէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հոգւոյն Սրբոյ», իսկ վերջում ձեռքի ափով ջուր է լցնում գլխին երեք անգամ. այսպէս ողջ մարմինը թրջւում է:

42 *Մաշտոց*, Վենետիկ, 1831, էջ 24:

43 Իհարկէ, այժմ չափահասի Մկրտութիւնն այդպէս չի կատարւում. քահանան պարզապէս միւռոնաջրով թրջում է մկրտուողին:

44 **Հ. Վարդան Հ. Հացունի**, *Պատմութիւն հին հայ տարազին*, էջ 295:

Արարողութեան վերջում հնչում է շարականը, եւ «Հայր մերով» աւարտւում է Մկրտութեան խորհուրդը, որին յաջորդում է Դրոշմի խորհուրդը:

Բ. ԴՐՈՇՄԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մկրտութիւնից անմիջապէս յետոյ կատարւում է Դրոշմի արարողութիւնը, որով ամբողջանում է Մկրտութիւնը[45]: Դրոշմ նշանակում է օծում կամ կնիք, որով նոր մկրտուածը միւռոնի դրոշմամբ ընդունում է Ս. Հոգու շնորհը հոգեպէս զօրանալու, քրիստոնէական հաւատը պահպանելու նպատակով. «Դրոշմն է խորհուրդ յուսոյ, զի յուսալով ի զօրութիւն Ս. Հոգւոյն կարողանամք ընդդէմ թշնամւոյն»[46]:

Դեռեւս վաղ ժամանակներում Մկրտութիւնն ու Դրոշմն ընկալւում էին մի ամբողջական ծէս: Յորդանանում Քրիստոսի մկրտուելու ժամանակ Սուրբ Հոգին աղաւնու կերպարանքով իջնում է նրա վրայ որպէս դրոշմ. դրա համար էլ Եկեղեցին միացնում է Մկրտութիւնն ու Դրոշմը. «մինչեւ ԺԵ-ԺԶ դար, Մկրտութեան ու Դրոշմի արարողութիւնները նկատուած են իբր մեկ խորհուրդ, եւ այդ պատճառով իսկ ձեռագիրներու մէջ ամենեւին չենք հանդիպիր բաժանումի կամ նոր գլխակարգութեան»[47]: Իսկ առաքեալները Մկրտութիւնից անմիջապէս յետոյ իրենց ձեռքը դնում էին մկրտուածների վրայ, որպէսզի Սուրբ Հոգի ստանան (տե՛ս գործք Ը. 14-17, ԺԹ. 1-6, Եբր. Զ. 2). յետագայում դրան փոխարինեց միւռոնը, այսինքն՝ միւռոնը գործածուեց որպէս Սուրբ Հոգու իջեցման եւ ստացման միջոց: Այսպիսով, Դրոշմի խորհուրդը կատարւում էր կամ սուրբ միւռոնով, կամ մկրտուածների վրայ ձեռքը դնելով: Սակայն Հայոց Եկեղեցին ընդունեց Մկրտութիւնից անմիջապէս յետոյ Դրոշմի խորհուրդի կատարումը, այսինքն՝ միւռոնը գործածուեց իբրեւ աստուածային շնորհի փոխանցման միջոց: Բացի այդ, եթէ Մկրտութեամբ դառնում ենք Եկեղեցու անդամ, ապա Դրոշմով՝ Քրիստոսի զինուոր, որը պէտք է պայքարի չարի դէմ. «Մկրտութեամբն ծնանիմք ի յեկեղեցիս որպէս որդիս Աստուծոյ, եւ դրոշմելովն՝ լինիմք զինուոր Քրիստոսի ընդդէմ թշնամւոյն սատանայի: Եւ նախ ճակատն դրոշմեմք, զի առանց երկիւղի զինեսցին, եւ ապա զբոլոր անդամսն սպառազինեսցուք»[48]:

Խորհրդակատարման առաջին մասում քահանան միւռոնով օծում է մկրտուողի ճակատը, աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը (ափերը), սիրտը, մէջքը (թիկունքը) եւ, իւրաքանչիւր մասին քսելով միւռոնը, ասում է համապատասխան բանաձեւերը[49]: Դրանք ստանում են յատուկ շնորհ. այսպէս՝ ճակատի կնիքը երկնային պարգեւների համար է, աչքերինը՝ լուսաւորութեան համար, որպէսզի երբեք մահ չտեսնեն, ականջներինը՝ աստուածային պատուիրանները լսելու համար, քթինը՝ կեանքի քաղցրութեան բոյրը հոտոտելու ու զգալու համար է, բերանինը՝ որպէսզի ամուր մնայ շուրթերի պահպանութեամբ, ձեռքերինը՝ առաքինի եւ բարի գործեր կատարելու, սրտինը՝ որպէսզի սրբութեան մէջ հաստատուի եւ ճշմարիտ հոգին իր մէջ նորոգուի, թիկունքինը՝ որպէսզի այն ամրութեան ու հզօրութեան վահան լինի՝ դիմադրելու ու պաշտպանելու չարի բոլոր նետերից, ոտքերինը՝ դէպի

45 Մկրտութեամբ էլ է Սուրբ Հոգու շնորհը անցնում մկրտուողին, բայց եթէ Մկրտութիւնը մաքրուելու, նոր կեանք մտնելու և սկզբնական մեղքից ազատուելու խորհուրդ ունի, ապա Դրոշմը՝ կեանքում հոգեպէս զօրանալու, կեանքի փորձութիւններին դիմակայելու խորհուրդ:

46 **Գրիգոր Տաթեւացի,** *Գիրք հարցմանց,* էջ 587:

47 **Հ. Սահակ Ծեմճեմեան,** *Մկրտութեան արարողութիւնը Մաշտոցներու մէջ,* – «Բազմավէպ», 1972, թիւ 2-3, էջ 183:

48 **Գրիգոր Տաթեւացի,** *Ամառան հատոր,* էջ 151:

49 *Մաշտոց,* Պոլիս, 1807, էջ 16:

յաւիտենական կեանքի ճանապարհն անսասան քայլելու համար:

Խորհրդակատարման երկրորդ մասը կարծես զոհաբերութեան մի ծէս լինի, որը կատարւում է Սուրբ սեղանին մկրտուողի ընծայումով (Աստծուն նուիրումը) եւ Հաղորդութեամբ: Քահանան երկու մոմ է տալիս կնքահօրը[50], որպէսզի աստուածային այդ լոյսը առաջնորդի մկրտուողին ողջ կեանքի ընթացքում, իսկ ինքը գրկում է երեխային եւ սաղմոսելով բարձրացնում բեմ՝ երեք անգամ Սուրբ սեղանի առջեւ երկրպագելով: Այս ընծայումն աւելի ակնյայտ է ամենավաղ Մաշտոցում, որտեղ կարծես զոհաբերւում է ե՛ւ գլուխը սեղանին դնելով, ե՛ւ ծիսական համբոյրով. «Յետ այսորիկ հանէ ի բեմն [զնորընծայն] եւ երկրպագեցուցանէ առաջի սրբոյ սեղանոյն եւ երիցս անգամ համբուրիւ յերեսին կողմանն: Եւ ասէ զաղաւթս զայս. Տէր Աստուած ամենակալ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ քեզ խոնարհեցուցանեն հաւատացեալք զգլուխս իւրեանց...»[51]:

Խորհրդակատարումն աւարտւում է Քրիստոսի սուրբ մարմնի ու արեան ճաշակումով՝ Հաղորդութեամբ, այսինքն՝ աստուածային անմահ կեանքի շնորհումով. «Հաղորդէ զնորընծայն ի սուրբ մարմնոյ եւ յարենէ Տեառն՝ ասելով. Մարմին եւ արիւն[52] Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցի քեզ փրկութիւն եւ առաջնորդ յանվախճան կեանսն. ամէն»[53]:

Արարողութիւնից յետոյ քահանան երեխային յանձնում է կնքահօրը՝ աղօթելով նախ՝ երեխային, ապա՝ նրա հանդերձները: Երեխային նոր սպիտակ զգեստ են հագցնում՝ որպէս «հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան»[54], որի ժամանակ հնչում են սաղմոսներ: Քահանան կարմիր եւ սպիտակ թելերից ոլորած նարօտը կապում է երեխայի գլխին՝ ասելով. «Պահպանեա՛ զնարօտս Քրիստոս Աստուած մեր ընդ հովանեաւ Սուրբ եւ պատուական խաչի քո ի խաղաղութեան»:

Եւ աղօթքով աւարտւում է արարողութիւնը՝ մկրտուողին վերստին նոր կեանքի ուղղորդելու. «...Վասն երեխայիս աղաչեսցուք, զմարդասէ՛րն Աստուած, զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. եւ արժանաւորեսցէ զսա լուացման վերստին ծննդեան, եւ զգեստու անապականութեան: ... Լցո՛, Տէ՛ր, զսա երկնային քո շնորհօքդ, եւ զօրացո՛ ամենաբարի կոչմամբդ քրիստոնեայ անուանելով. եւ արժանի՛ արա զսա մկրտութեան վերստին ծննդեան Սուրբ աւազանին: Եւ ընդունելով զհոգիդ քո Սուրբ, մարմին եւ անդամ եղիցի Եկեղեցւոյ քում սրբոյ»[55]:

Ահա, այսպիսով, մկրտուողը դառնում է կատարեալ քրիստոնեայ եւ Հայոց եկեղեցու անդամ: Դրոշմի արարողութիւնից յետոյ կնքահայրը քահանայի հետ միասին, երեխային գրկած, տանում է տուն. «Յետ մկրտութեան՝ քահանայքն առեալ տանեն ի սուրբ եկեղեցւոյն զմանուկն ի տուն, շուրջառաւ, աւետարանաւ եւ լուցեալ մոմեղինօք»[56] եւ յանձնում մօրը[57]: Մտնելով տուն՝ երգում է «Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի սուրբ

---

50 Եթե մկրտվողը երեխայ է, ապա մոմերը կնքահայրն է բռնում, իսկ եթե չափահաս է, հէնց ինքն է բռնում:

51 Ձեռ. թիւ 457, Մաշտոց Ա., Թ. կամ Ժ. դար, «Կանոն Մկրտութեան [եւ կնունք տալոյ] յորժամ քրիստոնեա(յ) առնեն», թղ. 75ա: Տե՛ս Վենետիկի ցուցակ, հտ. Գ, էջ 22:

52 Որոշ Մաշտոցներում հանդիպում է միայն «Մարմին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» տարբերակով: Տե՛ս *Մաշտոց*, Կալկաթա, 1836, էջ 39:

53 *Մաշտոց*, Էջմիածին, 1894, էջ 72:

54 *Մաշտոց*, Պոլիս, 1807, էջ 17:

55 Նոյն տեղում, էջ 8:

56 *Մաշտոց*, Էջմիածին, 1894, էջ 79:

57 Մայրը երեխայի հետ եկեղեցի է գնում միայն քառասունքի օրը, որպէսզի քահանան աղօթի ու կատարի «Կարգ Քառասնօրէին»:

կուսէն. զի վերստին նորոգեսցես զապականեալն Ադամ...» չարականը[58]:

Գ. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՊՍԱԿ ՎԵՐՑՆԵԼԸ

Մկրտութիւնից ութ օր յետոյ կամ քահանան ինքն է գնացել մկրտուած երեխայի տուն, կամ երեխային են բերել եկեղեցի՝ միւռոնից հանելու: Մինչեւ այդ նորակնունք մանկանն ամէն օր տարել են եկեղեցի. «Եւ մինչ ի Ը. օրն տանին զնորակնունք մանուկն յամենայն աւուր ի յեկեղեցին եւ հաղորդեն: Եւ յաւուրն Ը.-երորդի առ դրանն եկեղեցոյն կրկին կատարեն զայս կարգս: Եւ առնուն զթագն ի գլխոյն»[59]:

Եթէ մկրտուածը չափահաս է, ապա ութ օր մնում է եկեղեցում եւ ութերորդ օրը քահանան վերցնում է պսակը. «...Եւ սպիտակազգեստ լիցի, եւ զգլուխն ծածկեալ ունիցի սպիտակ փակեղամբ կամ կտաւով ինչ: Զգո՛յշ կացցէ եկեղեցւոյ, եւ աղօթից պարապեսցի յամենայն ժամ. եւ ի պատարագի հաղորդեսցի մարմնոյ եւ արեանն Քրիստոսի»[60]: *Քահանան մկրտուածի գլխից հանում է նարօտը, լուանալով դրոշմած մասերը, աղօթում է: Լուանալուց յետոյ միւռոնուած ջուրը մեծ զգուշութեամբ թափում են որեւէ մաքուր տեղ կամ ցանում սենեակի անկիւններում՝ որպէս օրհնած ջուր եւ սրբութիւն:*

Ներկայումս հայոց մէջ տարածուած է ոչ թէ ութերորդ, այլ երրորդ օրը միւռոնից հանելու արարողակարգը, որը հաւանաբար նոր սովորութիւն է:

58 *Մաշտոց*, Պոլիս, 1807, էջ 18:

59 ՄՄ, ձեռ. 891, Մաշտոց, ԺԷ դ., էջ 19ա: Մկրտութեան կանոնում կայ «Կանոն յետ ութօրէից», ուր ասւում է, որ. «Եւ յաւուրն ութերորդի վերացուցանէ քահանայն զթագն (պսակն), այսինքն՝ զնարօտն՝ ի գլխոյ նորոգ մկրտելոյն: ...Քահանայն լուանայ զնոր մկրտեալ մանուկն և ասէ զաղօթս» (Տե՛ս *Մաշտոց*, Վենետիկ, 1831, էջ 37: Նաև՝ ձեռ. 1269, Մաշտոց ՂԱ., 1673 թ., տե՛ս *Վենետիկի ցուցակ*, հտ. Գ, էջ 507:

60 *Մաշտոց*, Վենետիկ, 1831, էջ 36: